ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՀԵՌԱԳԻՐԸ ՌՈՒՄԻՆԱՀԱՅ ՆԿԱՐԻՉ ՀՐԱՆԴ ԱՎԱԳՅԱՆԻՆ՝ ԾՆՆԴՅԱՆ ՈՒԹՍՈՒՆՀԻՆԳԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ

ՀՐԱՆԴ ԱՎԱԳՅԱՆ*

Բուխարեստ, Ռումինիա

Սրտանց կշնորհավորենք Ձեր կյանքի ութսունհինգ տարիները և Ձեզի կբերենք Մեր ամենաջերմ գնահատանքն ու օրհնությունը Ձեր վաստակին՝ նվիրված նկարչական արվեստին: Տասնամյակներ շարունակ վրձինը Ձեր մաքուր ձեռքին ստեղծեցիք գույներու ինքնուրույն նոր աշխարհ մը, Ձեր աշխարհը՝ արտահայտությունը Ձեր ներաշխարհին, Ձեր հույզերուն, Ձեր հոգվույն բարի ու խաղաղ պատկերին:

Սուրբ Էջմիածնին Ձեր նվիրած բազմաթիվ գեղանկարները Մեր օրերուն և գալիք ժամանակներուն բոլորին պիտի բաշխեն Ձեր գույներուն լույսերը, թովչությունը և երազները: Ձեզի, վարպետ Հրանդ, կմաղթեմ կենաց նոր երանդ, նոր ներշնչանք՝ շարունակելու գեղեցիկին ծառայելու Ձեր ակնիվ առաքելությունը:

Մեր օրհնությունը Ձեզի և Ձեր անպուգական քրոջ՝ օրիորդ Բեաթրիսին, պահապան հրեշտակը Ձեր կյանքին:

«Ողջ լերուք զօրացեալ Սուրբ Հոգւով»: Ամեն:

ՎԱԶԳԵՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին,
26 մարտ 1985 թ.

---

* Հրանդ Միհրանի Ավագյանը ծնվել է Սիրիայի Հալեպ քաղաքում, 1900 թ. մարտի 29-ին: Նախնական կրթությունը ստացել է տեղվույն Ներսեսյան վարժարանում և գերմանական լիցեյում: 1920 թ. տեղափոխվել է Ռումինիա և մշտական բնակություն հաստատել Բուխարեստում: Այստեղ նա պարարտ հող գտավ զարգացնելու իր նկարչական կարողությունները, և հատկապես աշակերտելով մեծանուն նկարիչ և ակադեմիկոս Ժ. Ա. Ստերիադիին՝ աճեց իբրև ինքնուրույն գունային զգացողություն, հարուստ ներաշխարհ և խորունկ մտածողություն ունեցող տաղանդավոր նկարիչ: Մի քանի անգամ եղել է Հայաստանում և ունեցել երկու անհատական ցուցահանդես: Հայաստանում նույնպես ստեղծել է հայկական բնաշխարհի գողտրիկ նկարներ: Մեծ է Հրանդ Ավագյանի վաստակը նաև ռումինական հին նկարների վերականգնման շնորհակալ աշխատանքում: